



Ազդարարության Trumpet's Sound Փոռ

50-րդ տարի, Ակսորություն
Հունվար - Օգոստոս 2019





Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույշեցյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է Աստված	Հովիվ՝ Հրաչ Գույշեցյան
Հյուրընկալել երկնային այցելումներին	Դոն Սթորմը
Երիտասարդ Դավիթը՝ որպես ծառա	Մանկանց ավետ. ընկ.
Փնտրեցներ և կգտներ	Ռեքս Տիրլավ
Հպարտություն	Քաղված
Եկեղեցու պատմությունը (7)	QMBC պանորամա
Մտորումներ	Լարիսա Խսպիրյան
Գանձը՝ կավե ամաններում	Վեր. Հովսեփ Հովսեփյան
Ամեն օր կես ժամ միայնակ	Քաղված
Այրվող խրճիթը	Քաղված
Մովսես (1).	Փոլ Ուայթինկ
Ապակե տարան	Քաղված

Ո՞Վ Է ԱՍՏՎԱԾ

Աշխարհը մեծ ջանքեր է գործադրում մերժելու Աստծուն և Նրա գոյությունը: Կառավարություններ, կազմակերպություններ և զանգվածային լրատվամիջոցներ ջանք չեն խնայում «Աստված» բառը մեր բառապաշարից հանելու և հանրային դարպոցներում Աստծո մասին ուսուցումը դադրեցնելու համար: Որոշ աստվածներ մարդու ձեռքով պատրաստված կուրքեր կամ արձաններ են, բայց ես խոսում եմ Աստվածաշնչի Արարիշ Աստծո մասին, որ էր և է և այսի գա. այն Աստվածը, որ Ալֆան ու Օմեգան է:

Աստված մարդուն Իր պատկերով ստեղծեց, և հավատում եմ, որ այս երկրի վրա յուրաքանչյուր մարդ՝ թե՛ քաղաքի, թե՛ հեռավոր գյուղի բնակիչ, Աստծուն գտնելու և Նրան երկրպագելու խոր փափագ ու սով ունի: Արարիշը մարդկային սրտում Իրեն փնտրելու ու գտնելու փափագ է դրել:

Աստված ի՞նչ է ասում Իր մասին. «Ես եմ առաջինը, և Ես եմ վերջինը. և Ինձանից բացի Աստված չկա» (Եսայի 44:6):

Աստվածաշունչն ի՞նչ է ասում Աստծո մասին. «Աստված Հոգի է, և Նրան պաշտողները պետք է հոգով և ճշմարտությամբ պաշտեն» (Հովի. 4:24):

Հիսուսն ի՞նչ է ասում. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ մեկը Հորը չի գա, բացի Ինձանով» (Հովի. 14:6):

Աստված Իր անձը հայտնեց Իր Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի միցոցով:

Աստվածաշունչը Երրորդության մասին սովորեցնում է մեզ. «Ուրեմն, գնացե՛ք ու սովորեցրե՛ք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28:19):

Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով

Աստված, որին երկրպագում ենք, եռամեկ Աստված է: Հետևյալ ձեւով կարող եմ նկարագրել այն. որպես մարդ՝ մենք ունենք հոգի, մար-

մին և շունչ: Մեր արարիչ Աստվածը Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված է:

Հիսուս Քրիստոսը եկավ մարդկության փրկության համար: Մեր փրկությունը մեղքից փրկվելն է: Մեր բոլոր մեղքերն Աստծոն դեմ են և ոչ թե իրար դեմ: Ամբարիշտը, փորձելով ազատվել հանցավորության զգացումից, մերժում է Աստծոն գոյությունը:

Խե՞ղճ հոգի, Աստծոն դատաստանից ո՞ր ես փախչելու: Բոլորս մեղանչեցինք և Աստծոն փառքից պակասեցինք: Աստվածաշունչը խոսում է դատաստանի օրվա մասին, երբ բոլոր ծունկերը խոնարհվելու են, և տղանարդիկ ու կանայք դատվելու են իրենց թե՛ բարի, թե՛ չար գործերի համեմատ:

«Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծոն պարզեն է. ո՞չ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա» (Եփես. 2:8-9):

Ապաշխարե՛ք և Հիսուսին եկեք: Փրկության դրուր լայն բացված է: Տեր Հիսուսն Իր կյանքը գոհեց խաչի վրա, որպեսզի դու կարողանաս ապրել: «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որորուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3:16):

Սա Աստծո շնորհըն է ողջ մարդկության համար: Այն երբեք գործերով կամ գումարով չենք կարող ունենալ. այն ձրի է, եթե մեղքերի թողության համար մոտենում ենք Հիսուսին:

Թերևս հարցնեք, թե ինչպե՞ս կարող եք փրկվել: Պատասխանը սա է. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք՝ դու և քո տունը» (Գործ 16:31):

Թող Աստված օրինի ձեզ:

Հ. Գ.



Հյուրընկալել երկնային այցելուներին

Կարդացե՛ք Ծննդոց 18:1-15-ը

Լավ է այս գլուխն ամբողջությամբ կարդալ ու ծանոթանալ դրանում ծավալված իրադարձություններին: Արրահամը հյուրընկալեց երկնային այցելուներին՝ առանց նախապես գիտակցելու, թե ովքեր են նրանք: Մենք կդիտարկենք, թե Աստված ինչպե՞ս հայտնվեց տարրեր մարդկանց Հին Կտակարանի ժամանակներում, այնուհետև՝ Սառայի հավատքը: Երբ կարծես բոլոր հույսերը մարում են, հնարավո՞ր է արդյոք՝ մտածենք, թե կան Աստծո համար շատ դժվար բաներ: Վերջապես տեսնում ենք, որ Արրահամն աղաչում է Աստծոն Սոլոմոն արդար մարդկանց կյանքի փրկության համար:

Երբ Եբրայեցիներին ուղղված նամակում գրողն իր ընթերցողներին քաջալերեց հյուրասեր լինել, նա իշխեցրեց նրանց, որ անտեղյակ լինելով՝ ոմանք իրեշտակների հյուրասիրեցին: Ոչ ոք չի կարող կանխատեսել, թե ինչ օրինություն կարող է բերել անակնկալ բարություն ցուցաբերելը: Անսպասելիորեն երեք մարդ կանգնեց Արրահամի առջև՝ իր վրանի դրան մոտ, երբ նա օրվա շող ժամին նստած հանգստանում էր: Կարելի է պատկերացնել, թե Արրահամի սիրտն ինչպիսի մեծ գոհունակությամբ էր լցվում, երբ տարիներ անց մտածում էր այդ օրվա մասին:

Արրահամը ցույց տվեց իր հյուրասիրությունը՝ առաջարկելով ջուր բերել, որպեսզի այցելուները լվանան իրենց ոտքերը: Նա նաև առաջարկեց մի պատառ հաց ուտել: Նրանք համաճայնեցին: Այնուամենայնիվ, ճաշը մի պատառ հացից շատ ավելի էր: Միզուցե Արրահամի առաջարկն արտացոլում էր այդ ժամանակների սովորույթը, որ տանտերը չափազանց շատ կերակուր չէր առաջարկում, քանի որ գուցե այցելուն մերժեր այն: Այնուամենայնիվ, Արրահամի ճոխ առատաձեռնությունն ակնհայտ էր: Երբ գառնուկ կամ ուլիկ մատուցելը բավարար էր համարվում, նա հորք մորթել տվեց: Արրահամի պատուատած սեղանն անկասկած «մի պատառ հաց»-ից շատ ավելի ճոխ էր:

Պատմությունը կարդալով՝ անմիջապես հասկանում ենք, որ նրանք սովորական մարդիկ չեն: Երկուսը հրեշտակ էին, որոնք Աքրահամի հյուրընկալությունը վայելելուց հետո պետք է Սոլոմ գնային: Սակայն երրորդ անձը Տերն էր: Մենք գիտենք, որ Տեր Հիսուսն Աքրահամի մասին ասել էր, որ նա ցանկացավ Իր օրը տեսնել, տեսավ այն և ուրախացավ: Մենք վստահ չգիտենք, թե Տերը ո՞ր դրվագը նկատի ուներ. եթե Նա նկատի չուներ Աքրահամի՝ իր որդի Խասհակին զոհ մատուցելը, ապա գուցե այդ դրվագը նկատի ունենար:

Սա միզուցե Թեոփանիայի (Աստվածահայտնության) մեր առաջին հստակ տեղեկությունն է: Թեոփանիան Տեր Հիսուսի՝ Հին Կտակարանի սրբերին հայտնվելն է: Սա առաջին դեպքն է, եթե վստահ կարող ենք ասել, որ Տերը հայտնապես տեսնվեց:

Աստված Աղամի ու Եվայի հետ խոսեց օրվա զով ժամին, քայց մեզ չի ասվում, թե ինչ ձևով հայտնվեց: Ենովքն Աստծո հետ քայլեց, քայց դարձյալ մանրամասնություններ չեն տրված, ոչ էլ գիտենք, թե Աստված ինչպես Նոյին փոխանցեց Իր պատգամը, կամ Աքրահամին՝ վաղ շրջանում: Աստված խոսեց Աքրահամի հետ, եթե Դովոր հեռացավ նրանից: Նա նաև տեսիլքով խոսեց, եթե ուխտով խոստացավ իրեն տալ այն երկիրը, որտեղ բնակվում էր (Ծննդ. 15): Նաև կարդում ենք, որ Աստված Աքրահամին հայտնվեց, եթե թլիփատության նշանը տվեց (Ծննդ. 17), սակայն դարձյալ մանրամասնություններ տրված չեն: Խսկ այստեղ նախ կարդում ենք, որ Աքրահամն իր աշքերը բարձրացրեց ու նայեց, և ահա երեք մարդ կանգնել էր իր մոտ:

Մենք կարող ենք զարմանալ ու հարց տալ, թե Աքրահամն ինչպե՞ս ճանաչեց իր Այցելուին և ե՞րբ ճանաչեց: Սրա մասին հուշում կա 3-րդ համարում, որտեղ Աքրահամը եզակի թիվ է օգտագործում, իսկ հետո՝ 4-րդ և 5-րդ համարներում՝ հոգնակի թիվ: Անկասկած, երկու հրեշտակների Սոլոմ գնալուց հետո Աքրահամը գիտակցեց, որ Տիրոց հետ է խոսում:

Աքրահամին այցելելու երկու պատճառ կար: Առաջինը՝ Սառան պետք է վստահ իմանար, թե ինքն Աքրահամին որդի է ծննելու, իսկ երկրորդը՝ Աքրահամը պետք է տեղեկացվեր Սոլոմի և Գոմորի դատավճոհ մասին:

Այցելուները նախ հարցրին, թե որտե՞ղ է Սառան: Այս հարցը նման է Ծննդ. 3:9-ի և Ծննդ. 4:9-ի հարցերին: Աստված գիտեր, թե որտեղ էր Արամը, և Նա գիտեր, թե որտեղ էր Աբելը, բայց ուզում էր տեսնել նրանց արձագանքը: Պատահում են ժամանակներ, երբ Աստված ինչ-որ մեկին օգտագործում է՝ մեզ ուղղելու հարց, որը սովորական է մեզ համար: Այդպես անելով՝ Նա ուզում է, որ մենք դադար վերցնենք և զգուշությամբ մտածենք, թե ինչ արեցինք կամ ինչ ենք անում:

Տերը գիտեր, թե որտեղ էր Սառան, բայց Իր տված հարցը գրավեց Սառայի ուշադրությունը: Եթե այցելուները գիտեին Սառայի անունը, ապա վստահաբար գիտեին նաև նրա որտեղ լինելը: Թեև Տերն Արքահամի հետ խոսեց, սակայն այդ ուղերձը հատուկ Սառայի օգտի համար էր: Նա հաստատ լսում էր այդ ուղերձը:

Հետաքրքրական է, թե ինչո՞ւ Տերն Անձամբ եկավ Սառայի մոտ՝ որդի ունենալու պատգամը փոխանցելու համար: Մի մեկնարան ասում է, թե միզուցե Արքահամը Սառային չէր տեղեկացրել Տիրոջ կողմից իրեն տրված լուրը: Սա այդքան էլ հավանական չէ, քանի որ Սառան զարմանք չհայտնեց, երբ Տերն իր մասին խոսելու ժամանակ Սառա անունը գործածեց, ոչ թե իր հին անունը՝ Սարան: Արդյոք նա չէ՞ր հավատացել Արքահամին, և այդ պատգամը պետք է հատուկ կերպո՞վ իրեն ասվեր:

Բայց դարձյալ մեզ համար դաս կա: Արդյոք իսկապես հավատո՞ւմ ենք, որ Աստված անհնարինը կարող է անել: Արդյոք վստահո՞ւմ ենք, որ Նա օրեցօր խնամում է մեզ: Մեր ճամփաներն ամեն օր կատարյալ վստահությամբ հանձնո՞ւմ ենք Նրան՝ գիտակցելով, որ Նա կարող է առաջնորդել ու պահպանել մեզ օրվա ընթացքում: Հավատո՞ւմ ենք, որ Նա կարող է զորացնել մեզ, որպեսզի կարողանանք հավատարմորեն իրեն ծառայել:

Այս պատմության մեջ մեկ այլ նրբություն կա, որը շփոթեցնում է մեզ: 17-րդ գլխում Արքահամի երեսի վրա ընկնելու և ծիծաղելու մասին որևէ մեկնություն չկա, երբ իրեն ասվեց, թե Սառան որդի է ունենալու: Նրա ծիծաղն անհավատությա՞ն նշան էր: Զգիտենք: Ինչո՞ւ նրա ծիծաղը չհանդիմանվեց, իսկ Սառայինը հանդիմանվեց:

Սառան կարծես թե կասկածի տակ դրեց Ամենակարողի զորությունը: Աքրահամը հավանաբար մտածեց, թե իր տարիքի մարդիկ ինչպե՞ս կարող են ծնող դառնալ, բայց Սառայի հարցի մեջ Աստծո՝ Իր տված խոստումը կատարելու կարողության նկատմամբ կասկած կար:

Այնուհետև Սառան կրկնապատկեց իր մեղքը: Անհավատության մեղքի վրա սուսն ավելացրեց: Երբեմն մեր սխալները ծածկելու մեր ջանքերն ավելի են շատացնում մեր մեղքերը: Շատ ավելի լավ է մեղքը խոստովանելը, քան այն ուրանալը: Ի վերջո, եթե նոյնիսկ թաքցընենք այն մեր ընկերներից, Ամենակարողից ոչինչ չենք կարող թաքցնել: Ամեն բան բաց է Նրա աչքերի առջև:

Ի՞նչ ենք սովորում: Աստված ամենազոր է և հավատարիմ Իր խոսքին: Նա կատարում է Իր խոստացածը: Մեր բաժինն այն է, որ ամբողջությամբ վստահեննք Նրան: Արդյոք այդպես վստահո՞ւմ ենք:

Դոն Սթորմը

Երիտասարդ Դավիթը՝ որպես ծառա

**Հոգևոր աճի սերտողաշար մանուկների և
պատանիների հետ աշխատողների համար**

Ի ո ողջ կյանքի ընթացքում Դավիթն առաջին հերթին Աստծո ծառա էր: Նրան համակած առաջնային նպատակն իր սիրելի Աստծուն ծառայելն էր:

Աստված նրան Իր ծառա էր անվանում. «Իմ Դավիթ ծառային» (Սաղ. 89:3, 20):

Ժողովուրդը նրան Աստծո ծառա էր անվանում «Իր Դավիթ ծառային ընտրեց» (Սաղ. 78:70): «Քո ծառայի Դավիթ...» (Գործը 4:25):

Նա բազմից իրեն Աստծո ծառա էր անվանում (Սաղ. 19:13, Սաղ. 143:12):

Դավիթն Աստծո ծառա էր ու ամեն ժամանակ պատրաստ՝ Նրան հնազանդվելու և Նրա կամքը կատարելու, նա նաև Աստծո ժողովրդի ծառան էր՝ Աստծո կողմից նշանակված ու Նրանով ուղղորդվող: Աստծո կամքն էր, որ նա սեփական ժողովրդին, սեփական սերնդին ծառայեր, այն ժողովրդին, ում հետ ապրում և ում առաջնորդում էր: Ու նա այդպես արեց հավատարմորեն մինչև մահ:

Սովորաբար Դավիթ մասին մտածում ենք որպես ուազիկի, ով պարտության մատնեց Գոդիարքին, կամ որպես գաղթականի, ում հալածում էր Սափուղը, կամ հատկապես՝ որպես Իսրայելի երբեմնի հզորագույն թագավորի: Բայց առաջին հերթին տեսնում և հիշում ենք որպես ԾԱՌԱՅԻ:

Աստված նաև ուզում է, որ մենք էլ լինենք Իր ծառաները կամ ստրուկները (DOULOS) (Մատթ. 25:21, Բ Տիմ. 2:24), ամեն ժամանակ հնազանդվենք Իրեն, ծառայենք ու Իր վերահսկողության տակ լինենք: Նա նաև ուզում է, որ մարդկանց ծառայենք, հատկապես մեր հավատակիցներին (Մատթ. 20:27, Գաղ. 5:13): Ինչպես կարող ենք ուղիներին ծառայել: Անելով այն, ինչի կարիքն ունեն: Ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքը պետք է լինի ծառայության վերաբերմունք՝ նրանց հնարավորինս օգնելու փափագով: Այդ իմաստով մենք ծառայում ու հնազանդվում ենք նրանց (Եփես. 5:21):

Դավիթի մասին խորհենով՝ պետք է երկու հարց տանք.

- արդյոք ծառայո՞ւմ ենք Աստծուն:
- արդյոք մեր սերնդին ծառայո՞ւմ ենք Աստծո կամոր:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն



Փնտրեցե՛ք և կգտնե՛ք

Մատթեոս 7:7

Աստված պահում է Իր խոստումները: Երբեմն ինչ-որ մեկը հարցնում է. «Խսկ ի՞նչ է լինելու այն մարդկանց վիճակը, ովքեր Քրիստոսի մասին երբեք չեն լսել: Նրանք գնալու են Երկի՞նք, թե՞ առանց առիթ ունենալու՝ դժոխվ»: Քրիստոսն Անձամբ է պատասխանում ասելով. «Փնտրեցե՛ք և կգտնե՛ք» (Մատթ. 7:7): Սա անպայմանական խոստում է, որը վերաբերում է նույնիսկ այն մարդկանց, ովքեր ապրում են այնպիսի վայրերում, որտեղ Ավետարանը լսելու հնարավորություն չեն ունեցել: Աստված ասում է՝ եթե նրանք փնտրեն, ապա կգտնեն: Նշանակություն չունի՝ Զինաստանի կենտրոնո՞ւմ են ապրում, թե՞ հեռավոր ու խոլ կղզում:

Սի քանի տարի առաջ մի խումբ քրիստոնյաների հետ դրնեղուու այցելեցինք Նոր Ջելանդիայի փոքրիկ քաղաքի բնակիչներին: Բացատրեցինք, որ քրիստոնյաներ ենք և եկել ենք մարդկանց Հիսուս Քրիստոսի մասին պատմելու համար: Սի տիկին, մեզ իր տուն իրավիրելով, ասաց.

- Երևի Աստված ձեզ ուղարկեց՝ ինձ օգնելու:

Սա անսովոր արձագանք էր մեզ համար: Մենք ներս մտանք, և տիկինը պատմեց իր պատմությունը: Նա ապրել էր հետաքրքիր, լիարժեք և հաջողակ կյանք և Աստծո կարիքը երբեք չէր ունեցել: Իրականում նա արեիստ էր: Սակայն մի օր նրա 7-ամյա որդին նրա աշքերի առաջ մահացավ՝ ճանապարհային պատահարի պատճառով: Հաջորդ ամիսների ընթացքում իր վշտից մեծապես տառապելով՝ մի օր խոհանոցում հուսահատությամբ աղաղակեց՝ ասելով.

- Ո՞վ Աստված, ես երբեք Ձեզ չեմ հավատացել, չեմ հավատացել Ձո գոյությանը, բայց եթե կաս, Ձո Անձն ինձ ցո՞յց տուր:

Ընդամենը մի քանի շաբաթ անց մենք հայտնվեցինք նրա դռան առջև: Նա մեր այցելությունը տեսնում էր որպես այդ տարօրինակ աղորքի պատասխան: Կարծ ժամանակ անց ամուսինն ու ինքը ըն-

դունեցին Տեր Հիսուսին: Աստված կրկին պահեց այդ խոստումը: Այս տիկինն անկեղծորեն փնտրեց Աստծուն, և Աստված ամեն բան կազմակերպեց, որ նա գտնի Իրեն: Նման պատմություններ կարող եք լսել ամբողջ աշխարհում:

Չինացի մի փոքրիկ տղա էր ապրում հյուսիսային Չինաստանի գյուղերից մեկում, որտեղ ոչ ոք երրևէ Ավետարանը չէր հասցրել: Գիշերը տատիկն իր հետ նրան տանում էր մոտակա սրբավայրը՝ կուռքին պաշտամունք մատուցելու համար: Նա դուրսը կանգնում և նայում է տղեղ ու կեղսոտ կուռքին, որի առջև տատիկը ծունկի էր գալիս: Այնուհետև նա նայում է գիշերային երկնքի փայլում աստղերին ու զարմանալով՝ մտածում, թե ինչ կապ կա այդ կուռքի և աստղերի միջև: Նա ինքնիրեն մտածում է ու ասում. «Ես ուզում եմ ճանաչել այն Աստծուն, ով ստեղծեց այս աստղերը»: Որոշ ժամանակ անց չինացի մի քրիստոնյա Ավետարանը բերեց այդ գյուղ, և տղան առաջիններից մեկն էր, ով ընդունեց Քրիստոսին՝ որպես Փրկչի:

Եթե արդեն ճանաչում եք Աստծուն, բայց զգում եք, որ ձեր հոգևոր կյանքում առաջխաղացում չկա, ուրեմն պետք է ավելի բուռն փրնտրեք Աստծուն: Խորիրդածեք այս հարցի մասին՝ ի՞նչ եմ անում այն լույսի (գիտության) հետ, որն արդեն ունեմ: Մինչ կարդում եք Աստվածաշունչը և տեսնում եք, թե Աստված ինչպես է աշխատում տղամարդկանց և կանանց կյանքում, սկսում եք հասկանալ սուրբգրային հետևյալ հիմնարար սկզբունքը. նախքան ձեզ ավելի շատ լույս տալի Աստված ձեզ հարց է տալիս. «Ի՞նչ եք անում այն լույսի հետ, որն արդեն ունեք»:

Երբեւ կերակրե՞լ եք բարձր արռողջի վրա նատած փոքրիկ երեխայի: Երբ գդալով լի կերակուրն ուզում եք դնել երեխայի բերանը, կարևոր բան կա, որ պետք է հիշեք: Սպասե՛ք՝ երեխան կուլ տա բերիանում եղածը, նախքան հաջորդ գդալը դնելը: Եթե 2-րդ և 3-րդ գդալը դնեք, խառնաշփոթ կատեղծեք: Աստված կերակրում է մեզ գդալ առ գդալ: Բայց կարևորն այն է, որ դուք հասկանար՝ Նա 2-րդ գդալը չի տա, եթե առաջին գդալի պարունակությունը կերած չլինեք:

Ընդունված լույսն ավելի շատ լույս է բերում: Մերժված լույսն ավելի խավար է բերում:

Հպարտություն

«Կործանման առջևից հպարտությունն է գնում, իսկ անկման առջևից՝ ամբարտավան հոգին: Համեստների հետ խոնարի հոգով լինելը հպարտների հետ ավարներ բաժանելուց լավ է» (Առակ. 16.18, 19):

- Լավ եմ իշում, - պատմում էր նավաստին իր ծառայության մասին, - ինչպես ծով դուրս եկանք: Տեսանելիությունը վատն էր: Հանկարծ առջև նայող դետը բղավեց.

- Եռյս կա նավի աջ կողմում:

- Սա անխուսափելի բախում էր նշանակում: Նավապետը, բղավելով, ասաց.

- Հայտնեք նրանց, որ 20 աստիճանով փոխեն ուղղությունը:
Արձագանքը հետևյալն էր.

- Առաջարկում եմ, որ դուք անեք դա:

Սպան պնդում էր.

- Ես ուզում նավի վրա եմ:

Ի պատասխան դրան՝ ասվեց.

- Իսկ ես փարոսի վրա եմ:

Բնականաբար ուղղությունը մենք փոխեցինք:

Այս զվարճալի դեպքը լուսաբանում է մարդկանց մեջ տարածված մի հատկանիշ՝ պնդել սեփական տեսակետը՝ չփորձելով հասկանալ զրուցակցին: Ի՞նչ անհմաստ և երկար խոսակցություններ են առաջանում արդյունքում: Եկեք փորձենք հասկանալ ուրիշներին և լավ վերաբերվել նրանց՝ առանց մեր մտքերը պարտադրելու:

Ո՞րն է այս վարքի իրական պատճառը: Մեր հպարտությունը: Ցանկացած գնով ճիշտ լինելու փափազը հեռանկար չունի և նույնիսկ ոխային է մարդկանց հետ վարվելիս, բայց ավելի ամբարենապաստ է Աստծո հետ վարվելիս: Գուցե նեղված եք Նրանից և որոշել եք չհավատալ Նրան: Ես խորհուրդ կտայի պատմել Նրան դրա մասին, իսկ հետո լսել, թե ինչ է Նա ասում ձեզ Աստվածաշնչի միջոցով:

Եկեղեցու պատմությունը (7)

Ա.թ. 1517-2000թթ.

17-րդ դարը երեսուն տարվա պատերազմ տեսավ (1618-1648 թթ.), ինչը ավարտին հասցրեց Բարեփոխության ժամանակաշրջանը: Այս ժամանակահատվածում բոլորքականները պատերազմեցին կարողիկների դեմ, սակայն միևնույն ժամանակ պատերազմներ ընթացան կայսրերի և իշխանների, ինչպես նաև ազգերի միջև: Ի վերջո, Վեստֆալյան հաշտությունը կնքվեց 1648 թ.-ին: Կալվինիզմը, լութերականությունը և հռոմեական կաթոլիկությունը ճանաչվեցին որպես իրավական կրոններ: Հոլանդիան և Շվեյցարիան ստացան իրենց անկախությունը: Անգլիան, Շոտլանդիան, Հոլանդիան, Ականդինավիան, Գերմանիայի մի մասը և Շվեյցարիայի մի մասը հաստատեցին բոլորքական եկեղեցիներ: Հռոմեական եկեղեցին ուժեղ մընաց Արևմտարում, իսկ ոռու Ուրդափառ եկեղեցին դարձավ Ուուսատանի ազգային եկեղեցի:

Չնայած դրան, որ այդ ժամանակ Ավետարանը հստակ չներկայացվեց չինացիներին, պետք է նշել, որ Բարեփոխության շրջանի ավարտին Չինաստանում քրիստոնեություն մտցնելու փորձեր արվեցին: Ֆրանսիս Խավյերը (1506-1552թթ.) ծառայում էր ճապոնիայում և պատրաստվում էր Չինաստան մեկնել, սակայն հիվանդացավ ու մահացավ: Բայց նրա փոխարեն ուրիշ մեկը հայտնվեց՝ Մերյու ՈՒշին (1552-1610 թթ.): Նա մաքենատիկոս և աստղագետ էր: Չինաստան մուտք գործեց որպես գիտնական և ուսուցիչ: Իհարկե, նրա վերջնական նպատակը ավետարանելն էր:

ՈՒշին նախ բնակվեց Մալակա քաղաքում՝ Չինաստանի առավնյա պորտուգալական գաղութում, որտեղ սովորեց չինացիների լեզուն ու մշակույթը: Նա լավ ընդունվեց Չինաստանի հեռավոր մարզերում: Ի վերջո քայլ առ քայլ հասավ մայրաքաղաք Պեկին: Այնտեղ նույնապես լավ ընդունվեց և 10 տարի մայրաքաղաքում բնակվելու բույլ-տրվություն ստացավ որպես աստղագետ և մաքենատիկոս: Այս ժամանակահատվածում ՈՒշին օգնեց Հիսուսի միաբանություն (ճիզ-

վիտների միաբանություն) առաքելությունը ստեղծելու գործում: Նրա մահվան ժամանակ նրա հիմնած Եկեղեցին արդեն շուրջ 2000 անդամ ուներ:

Ոիշիի իրավահաջորդ Ադամ Շալը նույնպես շնորհ գտավ չինացիների առջև և 1650 թ.-ին Պեկինում հանրային Եկեղեցի կառուցեց. հետագայում ամբողջ կայսրության համար կրոնի ազատություն ձեռք բերվեց: Այդ ժամանակներում Եկեղեցին աճեց՝ ունենալով մոտավորապես 270.000 մարդ: Սակայն Չինաստանի գործի շուրջ վեճեր ծագեցին Հռոմի կարողիկ Եկեղեցու ներսում, և մեկ դարի ընթացքում Չինաստանի առաքելությունը ամբողջովին դադարեց:

3. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆ (1648-1789 թթ.)

Բարեփոխության ժամանակաշրջանի ավարտի խաղաղության և կրոնական հանդուժողականության մթնոլորտը կարծես թե դուք բացեցին բազմաթիվ քրիստոնեական նոր համայնքների և աղանդների առաջ: Օրինակ՝ հայտնվեցին Քվակերները (Բարեկամների միությունը), որը հիմնադրվել էր Զորջ Ֆորսի կողմից (1624-1691 թթ.): Նրա ուսմունքը տարածվեց Անգլիայում, Իռլանդիայում, Ասիայում, Աֆրիկայում, Արևմտյան Հնդկաստանում և Հյուսիսային Ամերիկայում: Նրանք խիստ հալածվեցին, քանի որ բացահայտորեն քննադատում էին գործող Եկեղեցիներին, իրաժարվում որոշ տեղերում հարկեր վճարելուց և երբեմն խանգարում էին ուրիշների Եկեղեցական ծառայություններին: Նրանք չէին ընդունում Աստվածաշունչը՝ որպես Աստծո վերջնական հայտնություն, և մերժում էին նորկտակարանյան հստակ վարդապետությունները: Նրանք հետաքայում ներգրավվեցին բանտերում սոցիալական բարեփոխումներ կատարելու և սորկատիրության դեմ բողոքների մեջ: Նրանք գոյություն ունեն առայօր, և նրանց հետևորդների թիվը կազմում է մոտ 200.000 մարդ:

Այս ժամանակահատվածում հայտնված աղանդներից մեկը Շվեդ-բրոգյանիզմն է կամ Նոր Երուսաղեմի Եկեղեցին, որի հիմնադիրը Էմանուել Շվեդբորգն է (1688-1772 թթ.): Այս մարդը չափազանց շատ հեռու գնաց ուղղափառ համոզմունքներից. նա հերքեց Երրորդությունը, սկզբնական մեղքը և Քրիստոսի քավությունն ու հարությունը:

Կային նաև աճող թվով մարդիկ, ովքեր հավատում էին, որ աստվածային հայտնությունը կարելի է փոխարինել մարդկային տրամաբանությամբ և դիտարկմամբ: Այս ռացիոնալիզմն առաջ է քաշվել գիտնականների և փիլիսոփանների միջոցով, ովքեր ձգուում էին քացատրել տիեզերքը մաքնատիկական տերմիններով:

Ունենալու Դեկարտը (1596-1650 թթ.) ֆրանսիացի փիլիսոփա և մաքնատիկոս էր, որը իհշվում է իր հայտնի խոսքի համար. «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»: Նա պնդեց, որ տիեզերքը ծրագրված և կարգավորված է մաքնատիկական կերպով և դեկավարվում է քննության օրենքներով: Միևնույն հայեցակարգի վրա իր ուսմունքը կառուցեց Իսահակ Նյուտոնը (1642-1727 թթ.), ով հայտնաբերեց տիեզերական ձգողականության օրենքը: Այս և շատ որիշներ նպաստեցին այն իրողությանը, որ կոչվեց Գիտական հեղափոխություն: Չնայած որ այս մարդկանց շարքում կային քրիստոնյաներ, սակայն մեծ մասը քրիստոնյա չէր, և նրանք մարդկանց հեռացրին Աստծուց և Աստվածաշնչից:

Բայց այս մարդկային հիմնավորմանը չպետք է մատների արանքով նայել: Հոգևոր մեծ արքնություն կամ զարքոնք եղավ Գերմանիայում, Ալեքսանդրավիլյայում և Ըստեցարիայում: Առաջնորդների անուններից են Սպեները (1635-1705 թթ.), Ֆրանկը (1663-1727 թթ.) և Զինգենդորֆը (1700-1760 թթ.): Առաջին երկուսն աշխատեցին Լյութերական եկեղեցու ներսից, սակայն նրանց աշխատանքը կարծես թե երկար չտևեց: Զինգենդորֆը արքնություն բերեց Լյութերական եկեղեցում և իր միսիոներական նախանձախնորության շնորհիվ միսիոններներ ուղարկեց տարրեր երկրներ: Այս միսիոններները ի վերջո հայտնի դարձան՝ որպես Մորավյաններ: Այնուհետև 1742 թ.-ին միսիոններները և նրանց նորադարձները կազմակերպեցին առանձին համայնք, ինչը դեմ էր Զինգենդորֆի ցանկությանը: Այսօր աշխարհում շուրջ 500,000 մորավյան կա, որոնց մեծ մասը գտնվում է Տանգանիայում և Հարավային Աֆրիկայում:

1735 թ.-ին Ջոն Ուեսլին (1703-1791 թթ.)՝ որպես Անգլիկան ծառայող, միսիոններական ճանապարհորդության գնաց Հյուսիսային Ամերիկայի Ջորջիա նահանգ: Այդ շրջանը վերապերեց այն, ինչ հայտնի

Է Առաջին մեծ արթնությունը անվանումով: Այնտեղ նա հանդիպեց Մորավյան միսիոներներին և ի զարման իրեն բացահայտեց, որ ինքը դեռևս քրիստոնյա չէ: Ուստի վերադարձավ Լոնդոն և 1738 թ.-ին վերջապես խաղաղություն գտավ Աստծո հետ՝ միայն Քրիստոսի հանդեպ եղած հավատի շնորհիվ: Նրա եղբայրը՝ Չարլզ Ուեսլին (1708-1788 թթ.), նույնպես քրիստոնյա դարձավ, և երկու եղբայրները, Անգլիայում քարոզելով, հազարավորների Քրիստոսին բերեցին: Սա կոչվում է ավետարանչական կամ մերոդիստական արթնություն: Նոհադարձներից ոմանք միացան Անգլիկյան եկեղեցուն, իսկ մյուսները՝ Ակրտական կամ Ժողովական եկեղեցիներին: Սակայն մեծ մասը 1784 թ.-ին ձևավորեցին նոր համայնք, որը հայտնի դարձավ որպես Մերոդիստական եկեղեցի:

Թեև Զոն Ուեսլին հիմնականում քարոզիչ էր, նա բազմաթիվ կրոնական հոդվածներ է գրել գրքույկների տեսքով: Նա նաև ամսագիր է պատրաստել: Նրա տպագիր քարոզներն ու բացատրական գրառումներն արդյունավետ կերպով ձևավորեցին Մերոդիստական եկեղեցու վարդապետությունը: Իսկ նրա եղբայր Չարլզը աշխարհին հայտնի ամենահոչակավոր օրիներգեր գրողներից մեկը դարձավ: Նա գրել է ավելի քան 7000 օրիներգ և բանաստեղծություն: Դրանք մեծապես նպաստեցին ավետարանական արթնությանը:

Զորջ Ուայտֆիլդը (1714-1770թթ.)՝ Ուեսլի եղբայրների ընկերը, մեծ հաջողություններ ունեցավ Հյուսիսային Ամերիկայում բաց երկնքի տակ քարոզության մեջ: Նա վերադարձավ Անգլիա և Զոն Ուեսլիի հետ միասին Անգլիայում բացօթյա երկնքի տակ ավետարանչական ժողովներ կազմակերպեցին և նման հաջողությունների հասան: Այնուհետև Անգլիայում ձևավորվեց Մերոդիստական եկեղեցին:

(Չարունակելի)



Մտորումներ

Ընտանիքի մասին

Ո՞վ Տեր, ո՞ւժ տուր, որ ներեմ, հավատ տուր, որ չինի կասկածամբություն, ճշմարտություն տուր, ուր կա մոլորություն, հո՛յս, ուր կա հուսահատություն, լո՛յս, ուր խավարն է տիրում:

Անկայուն է այն ընտանիքը, որի հիմքը դրված է եսասիրական ցանկությունների՝ ավազի վրա, և թույլ փորբորիկն անգամ կքանդի այն. փորբորիկները իմաս մոլեգնում են: Մեծ թշնամին անդադար փորձում է իր չար մտադրությամբ բաժանել Աստծո տված անմար Լուսից: Սակայն Աստծո ներկայության վեմի վրա կառուցված ընտանիքը (տունը) հուսալի և ապահով է: Նրա հիմքը Տիրոջ կամքը կատարելն է և ուրիշի հանդեպ անշահախնդիր սերը: Ուժեղ փորբորիկի ժամանակ այսպիսի տունը կանգուն կմնա Աստծո խոստումների հավատով և դրանց կատարման հույսով:

Քրիստոնեական կյանքի մասին

Կյանքում շայթաքելու համար հարկավոր է կանքեղի լույսը: Փորձության ժամին դաժան հիասքափության մեջ չընկնելու համար կայսոր է հիշել, որ մենք պետք է մաքրագործվենք: Թող մեզանում ապրող լույսը հանդիպի մեկ ուրիշի լույսին: Սակայն անխուսափելիորեն լինում է պահ, եթե մեր լույսը հանդիպում է ուրիշի խավարին՝ վնաս ու ցավ հասցնելով, և մեծ ուժ է հարկավոր՝ տանելու այդ ցավը՝ չկորցնելով հույսն ու հավատը: Միակ ելքը Տիրոջ սրտում ապաստան գտնելու ձգտումն է՝ ամեն ինչ հանձնելով Նրա ձեռքը:

Այդպիսի վնաս ու ցավ են կրում նույնիսկ իրար սիրող մարդիկ, և այդ բանը չցանկանալով՝ թյուրիմացարար դառնում են թշնամիներ և շարաչար տանջում իրար: Հարկավոր է լոկ մի բան՝ աղոթքով սպասել Աստծո օգնությանը: Միայն թե դիմենք Նրան, և Նա կլուծի անլուծելին:

Խաղաղության մասին

Պայքարողը միշտ կպայքարի, նրան կդադարեցնի միայն Տերը: Նա պետք է նախևառաջ կողմանք դնի իր բերանին, որպեսզի խորասուզվի Աստծո ներկայության մեջ, քանի որ Նա է մեր խաղաղությունը: «Որովհետո Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ դարձրեց և մեջտեղի բաժանման պատը քանդեց» (Եփես. 2:14): Եթե մեր սիրտը խաղաղ է, Տերը խաղաղություն կհաստատի նաև մեր շորջը: Մենք երազում ենք խաղաղության մասին, բայց ոչինչ չենք անում անգամ մեր մերձավորների հետ հաշտ ու խաղաղ ապրելու համար: Մենք աղոթում ենք խաղաղության համար, բայց չենք մոռանում մեր աշխարհիկ կյանքը, առանց դիմադրելու ընդունում ենք մեզ խռովող խորհուրդներ, պարսավաճաք, չարախոսություն, զրպարտություն, կասկածամտություն: Ավանդ, բամբասում, կովում ենք մեր հարևանների, մեզ ատողների հետ և երկպառակություն ու մահ ենք սփռում մեր շորջբոլորը: Սրբված սիրտը կասեցնում է չարը:

Տե՛ր, քար սրտեր դու փշրի՞,

Պաղ սրտերը ջերմացրո՞ւ,

Ջո անմար հուր կրակով

Երանելին սովորեցրու:

Լարիսա Խսպիրյան

Թերևս մտածեք, թե աննշան եք Աստծոն մեծ ծրագրում, բայց այդպես չէ: Դուք չափազանց շատ կարևոր եք Աստծոն համար, այնքան կարևոր, որ Հիսուսը մահացավ ձեզ համար, և Սուրբ Հոգին այժմ ապրում է ձեր մեջ: Դուք ձեր աչքին թերևս շատ փոքր թվաք, և սա լավ է, քանի որ Աստված հպարտներին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին շնորհ է տալիս: Այնուամենայնիվ, թույլ մի՛ տվեք, որ ձեր խոնարհությունը մեղք դառնա՝ համոզելով ձեզ, թե Աստծոն համար ոչինչ չեք կարող անել: Աստված կարող է օգտագործել ձեզ՝ կատարելու իր կամքը երկրի վրա:

Ուորեն Ուիրզբի

Գանձը՝ կավե ամաններում

Բ Կորնթ. 4:7-18

Մա հրաշքների դարաշրջան է. վերջին հիսուն տարվա ընթացքում մարդկությունն ավելի շատ հրաշքների ու տեխնոլոգիական նվաճումների ականատես եղավ, քան տեսել էր աշխարհի ստեղծումից ի վեր: Այդուհանդերձ, ամենամեծ հրաշքը մարդկային մարմինն է:

Տեսնենք, թե մարմինն ինչ չափի զերմություն է արձակում. 2500 կալորիա: Դա բավարար է 5 թեյնիկ թեյ թրմելու համար: Չնայած դրան՝ մեր մարմնի զերմաստիճանը, անկախ մեր բնակության վայրից կամ տարվա եղանակից, անփոփոխ է:

Մեր մարմինն ունի 10 միլիոն նյարդային քջիջ, որոնցից յուրաքանչյուրն արտադրում է 700000 վոլտ էներգիա, սակայն ոչ ոք չի էլեկտրահարվում: Ուղեղի «հոսանքափոխարկիչը» նվազեցնում է հոսանքի բարձր լարվածությունն ու այն հավասարաչափ բաշխում մարմնում, որի շնորհիվ էլ առողջ ենք մնում:

Ի՞նչ հրաշալի է մարդու աչքը: Դեպի աչքեր գնացող 300000 նյարդ և արյունատար մազանոթ կա: Աչքը ամենակատարյալ «լուսանկարչական ապարատն է, որն օր ու գիշեր ակնթարթորեն գունավոր նկարներ է «նկարում»: Այն հրաշալի կառուցվածք ունի:

Եթե 17 դաշնամուր դնենք կոռոր կոռորի, կունենանք 1500 ստեղն այսպիսին է մեր լսողությունը. բազմաթիվ ելեկտրակարող է ընկալել:

Սիրտը, որ բռունցքի չափ մկանային մի հանգույց է, ամեն օր 3000 գազոն (հեղուկաչափի միավոր, որը հավասար է 4,55 լիտրի) արյուն է արտամղում 100000 մղոն արյունատար անորների միջով: 70 տարվա ընթացքում սիրտը բարախում է 3 միլիարդ անգամ և արտամղում է 77 միլիարդ գազոն արյուն:

Մեր ուղեղն Աստծո պարզեւած ամենաբանկարժեք պարզեւերից մեկն է, բայց ինչպես ասում են, նույնիսկ ամենախելացի մարդն ան-

գամ առավելագույնն իր ուղեղի կարողության 10 տոկոսն է միայն օգտագործում:

Այո՛, մարդու մարմինը հրաշք է, բայց Աստված ասում է, որ այն հող է և հողին էլ կվերադառնա: Այն գոլորչի է, խոտ, ընդամենը մի ծաղիկ, որ ժամանակավոր է, որդերի կերակուր, մահկանացու: Բայց Աստված միայն այդ չի ասում: Այս մահկանացու և ապականված մարմնի մեջ Աստված գանձ է դրել, Իր շունչն է փշել՝ Իր հոգուց մի բեկոր, մի կայծ է դրել: Դա շատ թանկարժեք գանձ է, ամբողջ աշխարհից էլ թանկ, իհարկե՝ եթե հավատաս Աստծուն և Նրա տված առանձնահատուկ ու թանկարժեք կյանքի պարզևն ստանաս: Մարդիկ կան, ովքեր չեն հավատում Աստծուն, հավատում են ոչնչին: Հայտնի գրող Էռնեստ Հեմինգուեյը շատ ինքնարավ, ըմբուս ու խիզախն էր իրեն համարում, եթե Ժխոտում էր Աստծուն: Իսկ եթե նրա կյանքն անհաջող ընթացք ստացավ, և նա կորցրեց իր հպարտությունը, կորցրեց նաև ապրելու ցանկությունը: Ի տարբերություն նրա՝ Զոնի Էրիկսոնը, ով սարսափելի դժբախտ պատահարից հետո անդամալույծ էր դարձել, անմիջապես քացահայտել էր իր «կավե, կոտորած ամանի մեջ թաքնված գանձը» և սկսել էր այնպես ապրել, որ Աստծուն փառք բերի:

Տերությունը, հիվանդությունը, կյանքի ճգնաժամերը չեն կործանի մեզ, եթե Աստված դեկավարի մեր կյանքը: Նա մեր քայլայվող մարմինների մեջ կյանքի գանձ է դրել:

«Ամեն բանի մեջ նեղված ենք, բայց ճնշված չենք, կարուտ ենք, բայց չենք տարակուտում, հալածված, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած» (Բ Կորնք. 4:8-9):

Հիշենք, որ ամանը, թեև, կավից կարող է լինել, բայց հնարավոր է, որ նրա մեջ անզին գանձ լինի:

Հովսեփ Հովսեփյան



Ամեն օր կես ժամ միայնակ

«Ուստի այսպես է ասում Զորաց Տերը. «Ուշադրություն դարձրեք ձեր ճանապարհներին»» (Անգե 1:5):

Բարեպաշտ և խելացի հայրը ցուցամոլ ու անառակ որդի ուներ, որի հետ հաճախ խոսում էր ու սիրով, ինչպես նաև արցունքներով խրատում նրան, սակայն ապարդյուն: Չար ընկերակցությունը և աղտոտ ունակությունները խուլ դարձրին այս խղճալի երիտասարդին խրատ և հանդիմանություն լսելու համար: Մի օր մահացու հիվանդություն պատահեց ալեսոր հորը: Նա իր մոտ կանչեց որդուն և իր վերջին շնչով աղերսեց, որ շնորհ անի իրեն և խոստանա կատարել իր առաջարկը: Նա վստահեցրեց, որ եթե խոստանա դա կատարել, սրբտով խաղաղ կզաք իրեն, և մահվան ցավերը կմեղմանան: Առաջարկն այս էր. իր մահից հետո մի քանի ամիս ամեն օր կես ժամով առանձնանա իր սենյակում: Խորիրդածության հատուկ նյութ չտվեց: Դա իր կամքին թողեց:

Տղան կարծեց, որ ծնողական խանդատանքով համակված և մահվան անկողնում արված այնքան պարզ և դյուրին աղաչանքը կընդունի: Ուստի երդվեց իր պատվով, որ կատարելու է հոր առաջարկը: Եթե հայրը մահացավ, ուշադրությամբ կատարեց այն: Նախ՝ առանձնության այս բովեներն անցկացնելու անսովոր էր: Սակայն հետզհետեւ տարաբնույթ խորհուրդներ ծագեցին նրա մտքում: Նրա խղճմտանք արթնցավ ու սկսեց հանդիմանել ինքն իրեն հանուն իր բարօրության այսքան զոհողություն անող ծնողին արհամարհելու համար: Իր սիրելի հոր մահվան տեսարանի ու պարագաների ազդեցությունը նորոգվեց: Սրանք հետզհետեւ նոր խորհուրդների տեղիք տվեցին՝ ապագա դատաստանի և լուրջ ու ահավոր հավիտենականության: Աստված ուզեց օրինել այս առանձնության բովեները ու զորացնել նրա համոզմունքները: Առանձնությունը կատարեց այն, ինչ խրատը չկարողացավ անել, և իրական ու մնայուն փոփոխություն տեղի ունեցավ: Նա բողեց իր չար ընկերներին և բարեփոխից վարը: Իր կյանքի մնացած մասը առաքինությամբ և աստվածալաշտությամբ

անցկացրեց ու այսպես հաստատվեց, որ նրա ապաշխարությունն իրական և անկեղծ էր: Մի խոսքով, նա՝ իբրև բարի քրիստոնյա, ապրեց և մահացավ՝ լավ օրինակ հանդիսանալով շրջապատի մարդկանց համար:

Սիրելի՝ ընթերցող, չե՞ս ուզում դու նոյնպես ամեն օր գոնե կես ժամով առանձնանալ և խորհել քո մասին: Քանի որ մահը նոտենում է, և դրան հաջորդելու է դատաստանը, իսկ հետո՝ հավիտենականությունը: Մի՛ քնիր, մեղավո՛ր, քանի որ եթե մեկ անգամ դժոխք ընկնես, հավիտյան ազատում չես ունենա: Իսկ հիմա ձրի շնորհը, ներում, փրկություն և հավիտենական կյանքը մատուցվում է քեզ: Ի՞նչ սուկալի բան է այս օրինյալ պատեհությունը և առիթը կորցնելը, պատեհություն, որը ևս մեկ անգամ գուցե չունենաս:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու հոգևոր պատմությունների» գրքից

Այրվող խրճիթը

Կավաբեկությունից միայն մեկ ճամբորդ ազատվեց և շնչահեղձ հասավ անմարդաբնակ փոքրիկ կղզի: Թեև խեղճ մարդն ուրախ էր ողջ մնալու համար, բայց սրտանց աղորեց Աստծուն, որ իրեն ազատի այդ ամայի տեղից: Նա ամեն օր քննում էր հորիզոնը, սակայն ոչ մի նավ չէր տեսնում: Հուսահատ և հոգնած՝ վերջապես որոշեց փոքր խրճիթ կառուցել ջախջախսված նավի տախտակներով, որպեսզի պատսպարվի ցերեկվա արևից և գիշերվա ցրտից ու պահի ունեցած մի քանի առարկաները: Սակայն մի օր, երբ վերադառնում էր ուտելիք փնտրելուց, տեսավ, որ իր խրճիթն այրվում է բոցերի մեջ, և սև ծուխը երկինք է բարձրանում: Ամենավատն էր պատահել: Ամեն ինչ ոչնչացել էր: Խեղճ մարդը բարկությամբ և տխրությամբ լցվեց.

- Տե՛ր Աստված, ինչո՞ւ թույլ տվեցիր, որ այս փորձանքը զլխիս գա, - ասաց լալազին ծայնով: - Սա էր պակաս: Բավական չէ՞ որ միայնակ

Եմ մնացել այս կղզու վրա, որտեղից ազատվելու որևէ միջոց չունեմ: Այս խրճիթը շա՞տ համարեցիր ինձ համար:

Սրտնեղած՝ նա գլուխը մի քարի վրա դրեց ու քննեց: Վաղ առավոտյան մի նավի սուլոց արթնացրեց նրան: Նախ կարծեց, թե երազ է, բայց երբ կրկին լսեց նույն ձայնը, որ գնալով ավելի էր մոտենում իրեն, անմիջապես ծովափ վազեց և տեսավ իրեն ազատելու եկած նավը:

- Ինչպե՞ս իմացաք, որ ես այստեղ եմ, - հարցրեց շփորված մարդն իր ազատարարներին: - Ծովի տեսանք, - պատասխանեցին նավաստիները:

Խսկապես դյուրին է հուսահատվել, երբ ամեն ինչ սխալ է ընթանում: Սակայն պետք չէ հուսալըվել, քանի որ Աստված ամեն ինչի մասին տեղյակ է և գործում է մեր կյանքում, նույնիսկ ցավի և տառապանքի դժվարին պարագաներում: Հաջորդ անգամ հիշի՛ր, որ երբ խրճիթդ հիմնահատակ այրվի, դրա ծովի կարող է նշան լինել, որ հրավիրում է Աստծո հրաշագործ միջամտությունը կյանքիդ մեջ: Մեզ հանդիպած բոլոր ժխտական պատահարներում պետք է իմանանք, որ Աստված դրական պատասխան ունի:

Ուստի միշտ հիշենք, որ «Գիտենք նաև, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից» (Հոռմ. 8:28), և «Հույսով ուրախ եղեք, նեղությանը համբերեք, աղոքըների մեջ հարատնեք» (Հոռմ. 12:12):

Քաղված՝ «Օրինաբեր նոնենին» գրքից

Մովսես (1)

Կարդացե՛ք Ելից Յ-րդ գլուխը

Մովսեսը հզոր անձնավորություն էր: Իր մանկության և երիտասարդության շրջանում՝ մոտ 30 տարի, նա Եզիպտոսի արքայազն էր, արտօնյալ և կարևոր անձ: Դրանից առաջ նրան սնուցել

և դաստիարակել էր իր հրեա մայրը, ով սովորեցրել էր նրան սեփական ժողովրդի ավանդույթները: Նա երբեք չմոռացավ, որ հրեա լինելը նշանակում է լինել Աստծո ժողովրդի մի մասնիկը: Մովսեսն ամբողջ կյանքում հավատարիմ մնաց իր արմատներին:

Եկավ այն օրը, երբ նա եգիպտացիների փոխարեն գիտակցարար նախընտրեց իր արյունակից ժողովրդին (Եքր. 11:24), բայց դեռ չեր հասել Աստծո սահմանած ժամանակը, որ Մովսեսը դառնար Իսրայել ժողովրդի առաջնորդը: Դրա փոխարեն Մովսեսը նախ դարձավ վտարանի և փախատական, ապրեց օտարների հետ օտար հողում՝ հովվություն անելով ոչխարներին: Եգիպտացու համար դա ամենաստորացուցիչ, «սև» աշխատանքն էր: Մովսեսն արեց այդ աշխատանքը 40 տարի:

Ելից գրքի 3-րդ գլուխն սկսվում է, երբ Մովսեսը 80 տարեկան էր: Ողջ 40 տարիների ընթացքում նա ուներ այն ամենը, ինչ կյանքը կարող էր առաջարկել իրեն, բայց այնուամենայնիվ, հաջորդ 40 տարիներին նա ապրեց որպես հովվից, դրսում տառապեց տաք ու ցուրտ եղանակին, միայնակ՝ սարերում ու դաշտերում: Ի՞նչ էր անում Աստված նրա կյանքի հետ, եթե ծրագիր ուներ նրա կյանքի համար, ո՞րն էր այդ ամենի իմաստը. երբեմն հճաներդ ձեզ տվե՞լ եր այդ հարցը:

Մովսեսը սովորեց ուժեղ լինել և ստիպված սովորեց խոնարի լինել, դիմանալ, հաղթահարել դժվարությունները՝ առաջնորդվելով «հիմա ևս մեկ դաս կա առջևում» սկզբունքով: Նա պետք է ճանաչեր Տիրոջը, ով իր կյանքն առաջնորդում էր՝ առանց վերջինիս գիտակցելու:

Աստծուց կանչված և առաջնորդված

Մովսեսը հասավ Աստծո լեռ կոչված վայրը, ուր անձնապես հանդիպեց Աստծոն: Այնտեղ նա ապշահար եղավ՝ տեսնելով քուփը, որն այրվում էր, բայց չեր սպառվում: Նա զմայլված էր, բայց պատկերացում անգամ չուներ, թե ինչ պիտի հաջորդեր այդ ամենին՝ ինչպես մենք, երբ Աստված գալիս է մեր կյանք: Մեր Աստվածը նպատակների Աստված է: Տերը պարզորոշ հայտնում է Աստվածաշնչում, որ նպատակ ունի այս աշխարհի համար: Նա այս աշխարհում նաև նպատակ ունի մեր կյանքի համար, և երկու ծրագրերն էլ հաջողութ-

յամբ իրագործում է: Մեզ համար անհրաժեշտություն է միշտ «քայլել» Աստծո կողքին:

Այրվող թվի միջից Աստված խոսեց Մովսեսի հետ: Մովսեսը պատասխանեց գուցե հետաքրքրությունից դրդված: Կարծում եմ՝ նա 80 տարի հավատում էր Աստծուն, բայց Աստված երբեք չէր խոսել իր հետ: Աստված խոսեց, որպեսզի սովորեցնի նրան Իր ով և ինչպիսին լինելը:

Ի՞նչ գիտեր Մովսեսն Աստծո մասին. մենք չգիտենք՝ նրա մայրն ինչ էր սովորեցրել նրան, բայց նույնիսկ իմանալով Տիրոց մասին՝ Մովսեսը նրան չէր ճանաչում: Շատ մեծ տարբերություն կա: Աստծո մասին իմանալը ոչ մի բան չի փոխի քո կյանքում, իսկ Նրան ճանաչելը կփոխի:

Աստված հայտնում է Մովսեսին Իր բնությունը

1. Աստված սուրբ է

Աստծո առաջին հրահանգը ցույց տվեց՝ Մովսեսը չէր կարող իր ուղած կերպով Իրեն մոտենալ: Տերը պատվիրեց նրան հանել կոշիկ-ները: Գործողությունը խորհրդանշական էր, քանի որ կոշիկները Մովսեսի ամենակեղտու մասն էին այդ պահին: Աստված առաջին հերթին սուրբ է, շատ տարբեր մեզանից և ամբողջությամբ գերծ որևէ տեսակի անմաքրությունից: Մենք այդպիսին չենք: Մենք անմաքրությունը ֆիզիկապես, զգացմունքներով, մտքով և հոգևորապես: Արդյոք այս ամենը նշանակություն ունե՞ն մեզ համար. իհա՛րկե:

Աստված այսօր նույնն է: Նա միակն է, ով երբեք չի փոխվում: Երբ գալիս ենք Տիրոց առջև, Մովսեսի պես պիտի գիտակցենք, որ արժանի չենք դրան: Դա է պատճառը, որ խոստվանում ենք մեր մեղքերը, երբ գալիս ենք Տիրոց առջև աղոթելու կամ լսելու Նրա սուրբ Խոսքը: Դա պետք է լինի ամեն անզամ:

Ի տարբերություն ճշմարիտ Աստծո՝ ազգերի «աստվածները» բոլորովին սուրբ չեն, կարևորություն չունեն, անմաքրություն են: Ամեն բանի արարիչը հավիտենական է և մշտնշենական: Մենք պետք է մոտենանք Նրան մեծագույն հարգանքով և պատվով: Սա հնացած աշ-

խարհայացք չէ. դա այն է, ինչ Եբրայեցիների թղթի հեղինակը պատվիրում է մեզ: Մենք պետք է մոտենանք Նրան ակնածանքով և աստվածային երկյուղածությամբ, «որովհետև մեր Աստվածը սպառող կրակ է» (Եքր. 12:28-29):

2. Աստված ողորմած է

Այնուհետև Աստված հայտնեց Ինքն Իրեն՝ որպես ողորմած Աստված: Նա մեզանից հեռու չէ, անտարբեր չէ մեր դժվարությունների նկատմամբ: Աստված ասաց. «Խսկապես տեսա Եզիպտոսում գտնվող Իմ ժողովրդի տառապանքը և վերակացուների պատճառով նրանց բարձրացրած աղաղակը լսեցի, որովհետև Ես գիտեմ նրանց վշտերը» (Ելից 3:7):

400 տարի Աստծո ժողովուրդն ապրեց որպես օտարական՝ օտար հողում: Եվ չնայած նրանք բազմապատկվեցին, բայց չժառանգեցին խոստացված երկիրը և իհարկե օրինություն չդարձան ամբողջ աշխարհի ազգերի համար:

Աստծո ծրագրերը հավիտենական են և նախատեսված չեն միայն երկրային կյանքի համար: Մեր կյանքի ժամանակահատվածն աչքը թարթելու չափ կարճ է Աստծո մեծ հավիտենականության համեմատ, նույնիսկ եթե այն երկար է թվում: Աստծո փրկության ծրագիրն իրականություն կդառնա, որովհետև Նա խոստացավ, բայց ամեն բան կկատարվի Իր նախատեսած ժամանակին: Այնուամենայնիվ, Աստծո ծրագրում մեր կյանքի ներկայի պահերը նույնական ընդգրկված են: Եվ այստեղ տեսնում ենք, որ Աստծո ծրագրի հաջորդ փուլը Նրա վերադարձն է, քանի որ Իր ժողովուրդը տառապում է, և Նա հոգում է նրանց համար: Այսպիսով, Նա կրկնեց Իր խոստումը «... Նրանց այդ երկրից մի լավ ու լայնարձակ երկիր, մի կաք ու մեղք բխող երկիր եմ թերելու ...» (Ելից 3:8): Ինչ էլ որ մտածես, Աստված անտարբեր չէ: Նա հոգատար է:

Փոլ Ուայթինկ
(Ծարունակելի)

Ապակե տարան

Եթք կարծում ես, թե կյանքը անտանելի է, և 24 ժամը բավարար չէ, մեկ օրվա համար, իիշի՛ր այս պատմությունը և քաջալերվի՛ր:

Համալսարանի մի դասախոս վիխսովայության ֆակուլտետի իր ուսանողների առջև կանգնեց: Նա մի քանի առարկա ուներ սեղանի վրա:

Եթք դասաժամը սկսվեց, դասախոսը կափարիչով ապակե մեծ դատարկ տարա վերցրեց և սկսեց այն լցնել գոլֆի գնդակներով: Ապա հարցրեց ուսանողներին՝ արդյոք տարան լի՞քն է: Նրանք ասացին՝ այս: Դասախոսը խճաքարեր վերցրեց և դրանք տարայի մեջ դրեց: Մի քիչ ցնցեց շիշը, և քարերը տեղավորվեցին գոլֆի գնդակների միջև գտնվող ազատ տարածության վրա: Դասախոսը նորից հարցրեց, թե արդյոք տարան լի՞քն է: Ուսանողներն ասացին՝ այս: Հետո նա մի տուփ ավազ վերցրեց և բափեց տարայի մեջ: Ավազն ամեն կողմ լրցվեց: Կրկին հարցրեց, թե արդյոք տարան լի՞քն է: Հետաքրքրված ուսանողները միաբերան ասացին՝ այս: Ապա պրոֆեսորը սեղանի տակից երկու գավաք սուրճ հանեց և այն ամբողջությամբ թափեց տարայի մեջ, որը լիովին լցրեց ավազի դաստարկ բողած տեղերը: Ուսանողները ծիծաղեցին:

Եթք ծիծաղը դադարեց, դասախոսն ասաց.

- Ուզում եմ՝ իմանաք, որ այս տարան ներկայացնում է ձեր կյանքը: Գոլֆի գնդակները կարևորներն են՝ ընտանիք, զավակներ, առողջություն և նախասիրած առարկաներ: Եթե ամեն ինչ կորչի, և միայն դրանք մնան, կյանքը դեռ լիքը կլինի: Խճաքարերն արժեքավոր բաներն են՝ գործի, տունի և ավտոմեքենադ: Իսկ ավազը մնացած մանրություններն են:

Եթե նախ ավազը դնես տարայի մեջ, տեղ չի մնա խճաքարերին կամ գնդակներին: Նույնն է կյանքի պարագայում: Եթե ամբողջ ուժը և զորությունն պատճեն՝ տեղ տալով մանրություններին, երբեք տեղ չես ունենա իրավես կարևոր բաների համար:

Ուստի ուշադրություն դարձրու քո ուրախության վրա ազդող բաներին: Խաղա՛ զավակներիդ հետ: Բժշկական գննումները ժամանակին արա՛: Կողակցիդ սրճարան հրավիրի՛ր. միշտ ժամանակ կլինի տունը մաքրելու և կարող ծորակը նորոգելու: Նախ գոլֆի զնողակների մասին հոգ տար: Նախապատվություններիդ շարքը ճշտի՛ր: Մնացածն ավագ է:

Աշակերտներից մեկը ձեռքը բարձրացրեց և հարցրեց, թե սուրճն ի՞նչ է ներկայացնում: Ուսուցիչը Ժատաց.

- Ուրախ եմ, որ հարցրիր: Դա ցույց է տալիս, թե որքան էլ լիքը երևա կյանքդ, միշտ ժամանակ կա բարեկամի հետ մի քանի բաժակ սուրճ խմելու համար:

«Բայց դուք նախ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ» (Սատթ. 6:33):

Քաղված՝ «Ավետարեր ձիթենին» գրքից